Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 832 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1886 (Ն. Տ.) 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1886 26 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1304

40 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

غلطه‌ده نورادونكيان خانده آرهولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար տարեկան գանձելով առաջուց	200
» » վեցամսեայ » »	100
» » եռամսեայ » »	50
Գաւառաց » եւ տեղական թղթատարով տարեկան » »	240
Գաւառաց համար եւ տեղական թղթատարով վեցամսեայ » »	120
Օտար երկիրներ, տարեկան Ֆրանք	56
» » վեցամսեայ	28

Դուրս գրկուած յօդուածոց ձանձրը ծախքը Տնօրէնութեան վրայ է. Խմբագրութեան գրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1886

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿԻ ՀԱՅԵՐԸ

Ռուսահայ հրապարակագիր Պ. Սիմէոն Գուլամիրեանց, հաստատեալ ի Պետերսպուրկ, որ ժամանակէ մը հետէ Կ. Պոլիս կը գտնուի, Լրագրոյս վերջին թիւերուն մէջ հրատարակեց կարգ մը նկարագրական տեսութիւններ Պետերսպուրկի հայ գաղթականութեան վրայ։ Աներկբայ ենք թէ ընթերցողք հաճոյքով կարդացին այս յոյժ շահեկան յօդուածներ, յորս, Պետերսպուրկի հայ գաղթականութեան ազգային վիճակին վրայ ընդհանուր տեղեկութիւն մը տալէ ետք, Պ. Յօդուածագիրը ձեռնարկած է մի առ մի ներկայացնել մեզ այդ գաղթականութեան անդամ նշանաւորագոյն Հայազգիներն, որք փայլած են գիտութեան, քաղաքականութեան և զինուորականութեան ասպարէզներու մէջ, տիեզերական համբաւ մը ստանալով։

Այս յօդուածոց մէջ մեր ուշադրութիւն ամենէն աւելի գրաւեց կէտ մը, որ թուի թէ Պ. Յօդուածագրին եւս մտադրութեան գլխաւոր առարկայն եղած էր, այն է՝ Պետերսպուրկի Հայոց եկեղեցասիրութիւնն։ Երբ կը գանգատուի թէ քաղաքակրթեալ Հայոց մէջ եկեղեցասիրութեան զգացումը նուազելու վրայ է, մխիթարական է իմանալ թէ քաղաքակրթութեան բարձր աստիճանի մը հասած հայ հասարակութիւն մը, ինչպէս Պետերսպուրկի գաղթականութիւնն, անչափ բարեպաշտ ժամասիրութեամբ մը կապուած է Հայ Եկեղեցւոյն հետ։ Օտարութեան մէջ, յիրաւի, հայ եկեղեցին մասնաւոր հրապոյր մ'ունի, զոր դիւրաւ չեն կրնար զգալ հայ միջավայրի, հայ ընկերութեան մը մէջ ապրող ազգայինք։ Մանչէսդրի Հայոց եւս եկեղեցասիրութիւնը գովեստիւք յիշուած է։ Այսպիսի տեղեր, Հայոց համար սովորական եղածէն աւելի բարձր քաղաքակրթութիւն մը բնաւ չէ դպած եկեղեցասիրութեան։ Հայ մը որ միջակեալ մտքի մը հետ ունի զգայուն սիրտ մը, չի կրնար չսիրել զիւր Եկեղեցին, չի կրնար ճշմարիտ հաճոյք ու սփոփանք չզգալ անոր ժամերգութիւններէն։ Հայ Եկեղեցւոյն Հայոց յատուկ ազգային հանգամանք մը կրելը մասնաւոր մէկ տարրն է այն հրապուրանաց, զոր Գրիգոր Լուսաւորչայ Եկեղեցին ունի մեզ համար։

Շատ անգամ յիշուած, բայց իւր ակներեւ ճշմարտութեանն իսկ պատճառաւ յաճախ յիշատակուելու սահմանուած իրողութիւն մ'է թէ, Հայ Եկեղեցին Հայ ազգի պահպանման կարեւոր տարրերէն մին է. Թէ, օրինակի համար, եթէ այսօր Կովկասիոյ Հայք յունադաւանութիւն ընդունին, առաջին քայլ մ'առած կը լինին դէպ ի ձուլումն ռուս տարրին հետ, ինչպէս ռուս տարրին հետ արդէն ձուլուած են Փոքր-Ռուսիոյ այն Լեհեր, որոց ժամանակաւ ռուս կառավարութիւնն յաջողած էր օրթոտոքսութիւն ընդունել տալ։ Բայց և այնպէս, մեզ կը թուի թէ, ժամասիրութիւնն անվրիպելի ապացոյց մը չէ ազգասիրութեան։ Ազգասէր մը յաճախ ժամասէր է նաեւ. Բայց ամեն ժամասէրք ազգասէ՞ր են միթէ. Եթէ առ այս օրինակ կ'ուզուի, Պ. Գուլամիրեանցի յօդուածք կ'ընծեռեն զայն։ Կը տեսնե՞ք Պետերսպուրկի այս երեւելի հայ քաղաքագէտներ, զօրավարներ ու պաշտօնատարներ, որք ամեն կիւրակի ընտանեօք կը դիմեն հայ եկեղեցին, ուր ժամերով ոտքի վրայ կ'աղօթեն, առանց պէտք զգալու Կ. Պոլսոյ հայ եկեղեցեաց նստարաններուն, որք անչափ դայթակղեցուցած են դիւրագրգիռ Յօդուածագիրը։ Բայց կարելի՞ է ըսել թէ այս երեւելի Հայազգեաց ամենքն ալ կը փայլին օրինակելի ազգասիրութեամբ մը։ Անոնցմէ ոմանք խնամութիւններ հաստատած են ռուս ազնուականութեան հետ, որով եթէ ոչ իրենք, այլ ստուգապէս իրենց սերունդք դատապարտուած են ի ռուսականութիւն։ Ուրիշներ ալ գործիք են ճշգրիւ այն անօրինութեանց, որովք ռուս կառավարութիւնն ամենէն աւելի և ամենէն խոտելի եղանակաւ կը միջամտէ Հայոց եկեղեցային ու ազգային գործերուն։ Հակառակ այսմ, անոնք շատ եկեղեցասէր են, և մինչեւ իսկ երեւի թէ անոնցմէ ոմանք եկեղեցասիրութիւնն ալ ծայրայեղութեան տանելու կերպը գտած են, իրենց հոգւոյն բարեպաշտական կրկին զրահով մը պատելով, նման Իշխան Ս. Աբամելէք-Լազարեւի, որ Հայոց եկեղեցւոյն մէջ Ս. Հաղորդութիւն առնելէն անմիջապէս ետք կ'երթայ եղեր նաեւ Ռուսաց եկեղեցին, հոն եւս հաղորդուելու, իրեն յատուկ աստուածաբանութիւն և եկեղեցական պատմութիւն մը շինած լինելով Հայոց և Ռուսաց եկեղեցիներուն անխտրութեան վրայ։ Միայն թէ, պիտի առարկէ Արիստոտելի աշակերտ մը, քանի որ խտրութիւն չկայ երկուց Եկեղեցեաց մէջ, երկուքէն միոյն հաղորդութիւնը կը բաւէ մարդուն հոգեկան պէտքին, և թէ չստակերութեան այս նոր ձեւն, եթէ ուրիշ բան չէ, անիմաստ է գո՛նէ։ Մնաց որ, Հայ Եկեղեցւոյ հաղորդութեան ձուլումը ռուսական հաղորդութեան հետ՝ ո՛րչափ եւս ապահովութիւն տայ Պետերսպուրկցի հայ ազնուականին հոգւոյն, հեռի է կարծենք ապահովութիւն լինելէ Հայ Եկեղեցւոյ ապագային, եթէ Իշխան Լազարեանց ունենայ հետեւողներ. զի հայ և ռուս եկեղեցեաց միջեւ խտրութիւն չդնելուն յաջորդ քայլն է աւելորդ համարել Հայ Եկեղեցին։ Հայ քահանային ձեռքէն հաղորդութիւն առնելէ ետք ռուս քահանային ալ ձեռքէն հաղորդուելու բնական հետեւութիւնն է ուրիշ անգամ փոխել այս կարգ, և աւելի ետքը բոլորովին զանց առնել հայ քահանան։ Զայս ըստ ամենայն հաւանականութեան չպիտի ընէ Իշխան Լազարեանց, իւր ջերմ ժամասիրութեամբ. բայց իւր որդին և թոռն կրնան աւելի անխտրական լինել օր մը, և սկիզբն վրայ սկսեալ ձուլումը բովանդակ Հայ Եկեղեցւոյն վրայ տարածելու փափաք մը զգալ, Նիկոլա Կայսեր նման, որուն Ներսէս Աշտարակեցւոյն կողմէ տրուած պատմական պատասխանն արժանի է այս ժամասէր-ռուսասէր հայ ազնուականաց խորին մտադրութեան։ Կարելի չէ մոռնալ, այս առթիւ, թէ ժամանակաւ Թուրքիոյ Հայոց մէջ ալ «Հայ և Պապական Եկեղեցեաց միջեւ խտրութիւն չկայ» բառը քանի մը պարզամիտ այլ ազդեցիկ Հայերն էին որք հիմը դրին ազգային մեծ և ողբալի բաժանման մը։

* * *

Եթէ եկեղեցասիրութիւնը չենթադրեր ազգասիրութիւն, շատ պատճառներ կան խորհելու թէ ազգային ոգի կրող հայ մը չի կրնար եկեղեցասէր չլինել։ Բայց մեր քահանայք կը գանգատին միշտ թէ Կ. Պոլսոյ եկեղեցիներն ամենէն աւելի կանոնաւոր յաճախողներ կանայք և ռամիկ դասերն ու պանդուխտներն են, և թէ ուսեալ եւ բարեկեցիկ դասեր չեն փայլիր ժամասիրութեամբ։ Այս անտարբերութիւն շատ ցաւալի է։ Եկեղեցի չյաճախող Հայ մը սովորաբար ո՛չ եկեղեցւոյն, ո՛չ թաղին վրայ հոգածութիւն կ'ունենայ։ Եւ իւր եկեղեցւոյն ու թաղին վրայ հոգ չընող Հայու մը ազգային հանրական խնդրոց վրայ հոգածութիւնը շատ հարեւանցի պէտք է լինի։ Այս անտարբերութիւն, ժամանակ մը տեւելէ ետք, կրնայ երկրորդ բնութիւն մը դառնալ, և մարել կամ բթացնել ազգային լաւագոյն բնազդումները։ Բայց Կ. Պոլսոյ Հայոց լաւագոյն դասերուն մէջ ժամասիրութեան նուազումն ինչ ինչ դիտողութիւններ կը թելադրէ, արժանի Ս. Պատրիարք Հօր, Կրօնական Ժողովոյ և ընդհանրապէս Թաղական վարչութեանց խորին ուշադրութեան։ Ժամերգութիւնք Եկեղեցւոյ արտաքին գլխաւոր հրապոյրն են։ Ամենէն ուսեալ Հայն իսկ մեծագոյն ախորժ կը զգայ մանաւանդ ժամերգութիւններէն, որք կը խօսին Հայու սրտին ու Քրիստոնէի հոգւոյն հաւասարապէս։ Ժամանակաւ մեր հայրեր ու պապեր մեծագոյն խնամ կը տանին եղեր ժամերգութեանց։ Վերջին ժամանակներս անժխտելի է թէ մեր եկեղեցեաց ժամերգութիւնք խանգարուած են։ Դիւրին է ամեն կիւրակի տեսնել բազմաթիւ Հայեր որք իրենց թաղի եկեղեցին թողլով հեռաւոր եկեղեցի մը կ'երթան, իմանալով թէ հոն ժամերգութիւնք աւելի բարեկարգ և ներդաշնակ են եղեր։ Բայց ժամերգութիւնք կարգի չեն մտներ մինչեւ որ դպրաց դասը կամ ձայնաւորք յատուկ խնամոց առարկայ չլինին։ Առաջ ամեն դպրոցի լաւ ձայնաւոր աշակերտները դպրութիւն կ'ընէին։ Հիմա կեանքը շատ սուղ է. ծնողաց շատեր չեն ուզեր որ իրենց տղայք ժամավաճառ լինին դպրութեամբ։ Պէտք է ուրեմն որ դպրութիւն տեսակ մը վարձատրեալ և կազմակերպեալ ասպարէզ դառնայ իրօք և ո՛չ թէ լոկ խօսքով, ինչպէս հիմա։ Պէտք է նաեւ յատուկ խնամ տանիլ որ ամեն եկեղեցւոյ համար ձեռնհաս երաժշտապետներ հասնին։

Դիտելի երկրորդ պարագայ մ'է որ, ժամանակաւ խիստ կանոն մ'էր եկեղեցի տանիլ դպրոցի աշակերտները։ Այս դրութեան արդիւնքն էր որ ժամասիրութիւն մանկութենէ բնութիւն մը կը դառնար, որ չափահասութեան մէջ չէր փոխուեր։ Մարդ հաճոյք կը զգայ ամեն առաւօտ կամ գէթ ամեն կիւրակի դիմելով նոյն եկեղեցին, ուր իւր մանկութեան ու պատանեկութեան ամենէն անմեղ ժամերն անցուցած է հրեշտակներու մէջ, և հրեշտակային ներդաշնակութեան մը հմայից տպաւորութեան ներքեւ։ Այն անջնջելի յիշատակներ վառ մնալով երիտասարդին ու չափահաս մարդուն սրտին խորերը, կենաց մեծագոյն տագնապներուն մէջ ո՛րչափ սփոփիչ, ո՛րչափ փրկարիչ ազդեցութիւն մը կ'ունենան։ Բայց հիմա տղայք ընդհանրապէս եկեղեցի չեն տարուիր։ Վարժապետք անհոգ են. ծնողք անհոգ են. տաներէցք անհոգ են։ Այս եռեակ անհոգութիւն շատ վնասակար է ապագայ սերնդեան։ Պէտք է ամենայն երկիւղածութեամբ պահել դպրոցի տղայքը գէ՛թ շաբաթ և կիւրակի օրեր եկեղեցի տանելու ընտիր կանոնը։

Վերջին դիտողութիւն մ'ալ. Ժողովուրդն եկեղեցի տանող մեծագոյն ազդեցութեանց մին քարոզչին ազդեցութիւնն է։ Բացատրութեան իսկ կարօտ չէ թէ ուսեալ, հաւատացեալ և պերճախօս քարոզիչ մը դիւրաւ առ ինքն կը ձգէ ժողովրդեան ամեն դասերն անխտիր։ Բայց մեր մեծագոյն դժբախտութեանց մին է թէ, մեր բարձրաստիճան եկեղեցականաց մէջ իսկ լաւ քարոզիչներ յոյժ սակաւաթիւ են, և ասոնք անչափ քիչ անգամ կը խօսին, որ պարզապէս կրնանք ըսել թէ քարոզչի հոգեշահ արուեստն հետեւողներ ու մշակողներ չունի մեր եկեղեցականութեան մէջ։ Քարոզներէն շատը բացարձակապէս մտիկ ընելու բաներ չեն, մանաւանդ քիչ շատ ուսեալ անձի մը համար։ Հայ Եկեղեցւոյն համար Մեծ թերութիւն մ'է այս։ Առանց քարոզչի Եկեղեցի չի կրնար կենալ, և Կ. Պոլսոյ պէս կեդրոնի մը մէջ քարոզչին կը պահանջուին սովորականէն քիչ մ'աւելի հմտութիւն, պերճախօսութիւն, և անտարբերներու սրտին խօսելու կարող հաւատք, համոզում և զգացում։ Ժամասիրութեան նուազումը բարեկեցիկ և ուսեալ դասուց մէջ՝ մեք առանց վարանման կը վերագրենք՝ ի մէջ այլոց՝ նաեւ լաւ քարոզիչներու պակասութեան։ Եկեղեցական Հարք ժամանակ և միջոց կրնան գտնել դարմանելու զայս զգալի թերութիւն, եթէ միայն կամք ունենան։ Այս խնդիր եւս անհրաժեշտաբար կը պահանջէ Ս. Պատրիարք Հօր և Կրօն. Ժողովոյ ուշադրութիւնը։ Ցաւալի է որ իրարու յաջորդող Պատրիարքունք և Կրօն. Ժողովք Եկեղեցւոյն այս մեծ պէտքը լրացնելու համար ա՛նչափ քիչ կը մտածեն։ Ուսումնասիրութիւն և վարժութիւն, բնական տրամադրութեան հետ միացած, կրնան յաջողակ քարոզիչներ արտադրել, եթէ պէտք եղած միջոցը տրուի եկեղեցային իշխանութեանց կողմէ։ — Եւ մինչեւ որ այս այլ և այլ թերութիւնք չդարմանուին, չենք կարծեր թէ ժամասէրներուն թիւը կարենայ աճիլ՝ պարզապէս պարսաւելով եկեղեցի չգացողներուն անտարբերութիւնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՇԱՐԱԳԻՐ ՊՈՒԼՂԱՐ ԴԱՒԱԴՐԱՑ

(«ԹԱՅՄԶԻ» ՎԻԷՆՆԱՅԻ ԹՂԹԱԿՑԷՆ*.)

«Երբ ռուս սպայք էին ի Սոֆիա, դրամ կը վատնէին իշխաններու պէս, և բնականապէս գեղեցիկ օրեր կը տեսնէր «Պուլկարիա» օթելն։ Շամբանեա, Թղթախաղ, Սև Ծովու ոստրէներ, յոյժ ծախսական երեկոյներ, շնորհաւոր ներկայութեամբ Սոֆիայի թատրոնին օրիորդաց, որք մեծաւ մասամբ գաղթականներ էին Վիէննայի հասարակաց պարասրահներէն, — այս ամենայն փայլուն առատութիւն մ'ընել կուտար օթելին, որոյ տէրը, ռուսահպատակ պուլկարազգի գնդապետ Բենտերեֆ, ապերախտ մէկը պիտի լինէր եթէ այս հին դրութենէ գոհ չլինէր։

«Բայց եղաւ որ Աղեքսանդր Իշխան խորապէս վշտացուց զԲենտերեֆ։ Բարձրութիւն, տեսնելով թէ ի՛նչպիսի սրիկայութեանց ու շռայլութեանց կը վարժուէին երիտասարդ և աղքատ պուլկար սպայք, օր մը հրաման տուաւ և կարգ մը թեթեւաբարոյ կանայք ձերբակալուելով Սոֆիայէ Լոմ-Բալանքա տարուեցան։ Բայց որովհետեւ զանոնք Դանուբի ճամբով իրենց երկիր ղրկելու համար միջոց ձեռք առնուած չէր, կանայք տակաւ ետ դարձան, իրենց գանգատներով յուզեցին Սոֆիայի զինուորական շրջանակներն, և շարժեցին Բենտերեֆի մեծ սիրտն ալ, որ Իշխանին չներեց իւր այս միջամտութիւն հասարակաց ազատութեան։ Բաշխոյի պանդոկապետը քիչ ետքն աւելի ծանր թշնամանք մը կրեց։ Գիտնալով թէ Ռուսաց կազմած մէկ զօրագնդին փոխգնդապետ անուանուած էր, պահանջեց պուլկարական սպայակոյտին մէջ դրուիլ, իբրեւ երկրորդ սպայ. Բայց երբ սերպիական պատերազմը ծագեցաւ, արտօնութիւն խնդրեց տասն աւուր այց մ'ընելու Ռուսիա՝ ընտանեկան գործի համար։ Իշխանն ըսաւ. «Աստուա՛ծ պահէ զմեզ սպաներէ որք «արձակուրդ կը խնդրեն երբ պատերազմ ունինք», և թող տուաւ որ երթայ։ Պատերազմէն ետք Բենտերեֆ վերադարձաւ, աստիճանի բարձրացում պահանջելով, իբրեւ պուլկար սպայ. Իւր պահանջ մերժուեցաւ ի հարկէ, որով միտքը դրաւ վրէժ լուծել, և յօրէ անտի իւր օթելն մեքենայութեանց բոյն մ'եղաւ Իշխանին դէմ։

«Օգոստ. 20ի իրիկուն, զԲենտերեֆ տեսնել գացող ոմն գտած էր զ«Պուլկարիա» պաշտօնական համազգեստ հագած, շուարած, յուզուած։ Զինուորական դաւադիրք ճիշդ նոյն պահուն իւր յարկին տակ, «Պուլկարիա» օթելին սենեկաց մէջ, ստացած էին ռուսական հնչուն ռուպլիներն, և շատ մը պարպուած շիշեր ու գաւաթներ կային սեղանին վրայ։ Բայց փափուկ վայրկեան մ'էր այս, և Բենտերեֆ գիտէր թէ գլուխը վտանգի մէջ կը դնէր։ Ցետ մի քանի ժամուց, սակայն, տեսարանը փոխուեցաւ։ Դիւցազնային դաւադրութիւնն ի գլուխ հանուած էր, և առտուն կանուխ Բենտերեֆ, խրոխտալով ձիուն վրայ, Զանքոֆի հետ միացած, իշխանական պալատան քովի հրապարակին մէջ կը բանախօսէր [illegible] և [illegible] եկող մրգավաճառներու փոքր խմբին։ Պիսմարք Իշխան իմացա՞ւ արդեօք Զանքոֆի խօսքերն, որ կը շնորհաւորէր ժողովուրդը «Գերմանացի Պադէնպերկէն և ընդհանրապէս գերմանական խոտելի ազդեցութիւններէն ազատած լինելուն համար»։ Ապա յարեց. «Եկեղեցի երթանք, Աստուծոյ շնորհակալ լինելու մեր փրկութեան համար»։ Բենտերեֆ ժողովրդեան առաջնորդեց բարեպաշտական գործին կատարման համար, և իւր խնամօք, ռուպլիներ բաշխուեցան բոլոր ներս մտնողներուն։ Մի քանի օր յառաջ, երկու վարկեր, մին 1,200,000 ֆր. ի և միւսն 2,000,000 ֆր. ի, բացուած էին Սոֆիայի Ազգ. Դրամատան մէջ ի հաշիւ ռուս Գործակալութեան, որով ռուպլիներու առատութիւն կար։ Ցետ գոհաբանական արարողութեան, յորում կը պաշտօնավարէր Մետրապոլիտ Կլեմէս՝ մտահոգ և յուզեալ, Զանքոֆ աղաղակեց. «Հիմա երթանք ռուսական հիւպատոսարանն, «և ի ծունր իյնալով ներում խնդրենք Պադէնպերկի ապերախտութեան համար «ընդդէմ մեծ և բարի Ցարին»։ Վերստին Բենտերեֆ առաջնորդեց ամբոխին, որ երբ հիւպատոսարանի բակն հասաւ, «Գնդապետն» հրամայեց. «Ի ծո՛ւնր իջէք»։ Գիշերը քիչ մը անձրեւ տեղացած լինելով բակը ցեխոտ էր, որով շատեր մէկ ծունկ միայն խոնարհեցուցին առանց գետնին դպչելու, զոր տեսնելով Զանքոֆ, որ հարկ չէր զգար ծնրադրելով աղտոտել իւր տափատ, աղաղակեց. «Երկու ծունկերնիդ մէկէն խոնարհեցուցէ՛ք»։ Սոֆիայի պատուաւոր բնակիչներէն ո՛չ ոք մասնակցեցաւ այս ցոյցի, որ կատարեցաւ իբրեւ գէշ սերտուած զաւեշտ մը։ Աւելին կայ. Նոյն օրն իսկ, երբ վերցուեցան պահակներն որք դրուած էին քաղաքացի կարեւոր անձնաւորութեանց դրանց առջեւ, ժողովուրդն ա՛յնպէս սաստիկ բարկութիւն ցուցուց վատ դաւին դէմ, որ

(*). Տե՛ս այս մասին Շաբաթ աւուր Քաղ. Տեսութեան մէջ։

—)(65)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ՓԱՐՍԱԽ
ԾՈՎԵՐՈՒՆ ՏԱԿ

ՊՍԱԿԵԱԼ Ի ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԷՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Թ.

ՏԱՍՆ ՄԻԼԻՈՆԻ ՄՈՐԳՐԻՏ ՄԸ

Կակղամորթին երկու սփիւռը կէս բացուած էին։ Նաւապետը մօտեցաւ եւ իւր դաշոյնը մէջը խոթեց որպէս զի չկրնային գոցուիլ, յետոյ ձեռքովը վեր քաշեց թաղանթեայ ծոպաւոր վերարկուն՝ որով ծածկուած էր կենդանին։

Անդ, կակղամորթին տերեւակերպ ծալերուն մէջ ազատ մարգրիտ մը տեսայ, հնդկընկոյզի մեծութեամբ։ Գնդաձեւ կլորութիւնն եւ սքանչելի ջուրն անգին գոհար մը կ'ընէին զայն։ Հետաքրքրութենէս յափշտակեալ, ձեռքս երկնցուցի, որպէս զի բռնեմ, կշռեմ, շօշափեմ։ Բայց Նաւապետը բացասական նշանով մ'արգիլեց զիս և իւր դաշոյնը դուրս քաշելով թող տուաւ որ երկու սփիւռն անմիջապէս փակեցան։

Ցայնժամ հասկցայ Նէմոյ Նաւապետին դիտաւորութիւնը։ Թողլով զայն մարգրիտ տուփին վերարկուին տակ, թոյլ կուտար նմա աճիլ օր քան զօր անզգալաբար։ Ամեն տարի, կակղամորթին կեղեւը նոր խաւեր կ'աւելցնէր համակեդրոն։ Նաւապետը միայն գիտէր քարայրն, ուր «կը հասուննար» բնութեան այդ հրաշալի պտուղ. ինք միայն կը զարգացնէր զայն, օր մը իւր թանգարանը փոխադրելու համար։ Գուցէ իսկ, ըստ օրինակի Չինաց եւ Հնդկաց, նպաստած էր այդ մարգրիտին արտադրման, ապակւոյ կամ մետաղի կտոր մը խօթելով կակղամորթին ծալերուն մէջ, որ քիչ քիչ սատափեայ հիւթով ծածկուեր էր։ Ինչ եւ իցէ, զայս մարգրիտ իմ արդէն ճանչածներուս հետ բաղդատելով, նոյն իսկ Նաւապետին հաւաքածոյին մէջ փայլողներուն հետ համեմատելով, առ նուազն տասն միլիոն Ֆրանք արժեցուցի։

Բնութեան փառաւոր սքանչելիք մ'էր և ոչ պճնանքի գոհար. վասն զի չեմ գիտեր ո՛ր կանացի ականջք կրնային կրել զայն իբրեւ գինդ։

Մեծահարուստ սարէին այցն աւարտած էր։ Նէմոյ Նաւապետ դուրս ելաւ անձաւէն, եւ նորէն մարգարտաբեր սարէից ածուին վրայ ելանք այն վճիտ ջրոց մէջ, զորս դեռ չէին պղտորեր լուղորդաց [illegible]։

Ուրոյն կը քալէինք իբրեւ ճեմիկ դատարկապորտք, իւրաքանչիւր ոք կանգ առնելով կամ հեռանալով ըստ հաճոյս։ Իսկ ես, բնաւ միտքս չէր բերեր այն վտանգները, զորս այնչափ ծաղրելի կերպիւ ստուարացուցած էր երեւակայութիւնս։ Ծանծաղուտն զգալաբար կը մօտենար ծովուն երեսին, եւ շատ չանցած գլուխս ջուրէն դուրս մնաց։ Քոնսէյլ ալ քովս եկաւ եւ իւր մետաղեայ խոշոր գլխանոցն իմինին կըպցնելով, բարեկամական ողջոյն մը տուաւ ինծ իւր աչօք։ Բայց այդ սարահարթ քանի մը ձողաչափ միայն տարածութիւն ունէր, եւ շատ չանցած վերստին մեր տարրին մէջ մտանք։ Կարծեմ թէ այժմ իրաւունք ունիմ այսպէս կոչելու։

Տասն վայրկեան յետոյ Նէմոյ Նաւապետ կանգ առաւ յանկարծ։ Կարծեցի թէ դադար կ'առնէր՝ ետ դառնալու համար։ Բայց ո՛չ։ Նշանով մ'հրամայեց մեզ իւր քով երթալ ու կծկիլ լայն խոռոչի մը մէջ։ Ձեռքը դէպի լուծ տարրին մէկ կէտն ուղղեց, եւ ես ալ հոն նայեցայ ուշադրութեամբ։

Ինծմէ հինգ մեթր հեռի ստուեր մ'երեւցաւ եւ մինչեւ ի գետին խոնարհեցաւ. Շանաձկանց զարհուրելի գաղափարն անցաւ մտքէս։ Բայց կը սխալէի, եւ այս անգամ ալ դարձեալ գործ չունէինք Ովկէանի ճիւաղներուն հետ։

Մարդ մ'էր, ողջ մարդ մը, Հնդիկ մը, սեւամորթ մը, խեղճ մարդ մը վերջապէս, որ եկեր հասկաքաղ կ'ընէր հունձէն առաջ։ Իւր կուրփին տակը կը տեսնէի իւր գլխէն քանի մ'ոտք բարձր կեցած։ Հետզհետէ կը մխրճէր ու վեր կ'ելնէր։ Շաքարի գլխու ձեւով քար մը, զոր ոտներուն մէջ սեղմած էր, եւ որոյ ծայրը չուանով կուրփին կապուած էր, արագապէս ծովուն տակն իջնելու կը ծառայէր նմա։ Այս միայն էր իւր գործին։ Ծովուն տակն հասնելուն պէս, որ հինգ մեթր չափ խորութիւն ունէր, ծունկի վրայ կ'իյնէր, եւ ըստ բախտի գտնելն ստրէներ հաւաքելով իւր պարկին մէջ կը լնոյր։ Յետոյ վեր կ'ելնէր, պարկը կուրփին մէջ կը պարպէր եւ քարը վեր քաշելով, կը վերսկսէր իւր գործողութիւն, որ երեսուն երկվայրկեան միայն կը տեւէր։

Այդ լուղորդ չէր տեսներ զմեզ։ Ժայռին ստուերը մեզ կը ծածկէր անոր աչքէն։ Մանաւանդ որ, այդ խեղճ Հնդիկ կրնա՞ր երբեք ենթադրել թէ իրեն նման էակներ կային անդ, ջուրերուն տակ, իւր շարժմունքը դիտող, եւ իւր որսին ո՛չ մի մանրամասնութիւնը կորուսանող։

Քանի մ'անգամ մխրճեցաւ ու վեր ելաւ։ Մէն մի անգամուն հազիւ տասն չափ ստրէ կը հաւաքէր, վասն զի հարկ էր կորզել ածուին մէջէն, ուր ամրապէս կառչած էին իրենց դիմացկուն բեհեզով։ Եւ այդ ստրէներէն քանի՞ն զուրկ էին մարգրիտներէ, որոց համար խեղճն իւր կեանքը վտանգի մէջ դրած էր։

Խորին ուշադրութեամբ կը դիտէի զայն։ Գործողութիւնք կանոնաւորապէս կը կատարուէր, եւ կէս ժամու չափ ո՛չ մի վտանգ չսպառնացաւ նմա։

Ուստի կ'ընտելանայի այդ հետաքրքրաշարժ որսի տեսարանին։ Յանկարծ տեսայ որ ահաբեկ շարժում մ'ընելով վեր ցատկեց եւ ջուրին երեսն ելնել ուզեց աճապարանօք։ Վիթխարի շանաձուկ մը շեղակի վրան կ'երթար հրախայլ աչերով եւ բաց կզակով։

Սարսափէս կաշկանդեցայ եւ չէի կրնար շարժում մ'ընել։

Գիշատիչ կենդանին, լողաթեւին զօրեղ հարուածով մը խոյացաւ Հնդկին վրայ, որ մէկ կողմ նետուելով խուսափեցաւ անոր ժանիքէն, բայց ոչ պոչին հարուածէն, որ կուրծքին զարնելով ի գետին տապալեց զայն։

Այս տեսարան հազիւ քանի մ'երկվայրկեան տեւեց։ Շանաձուկն ետ քաշուեցաւ, եւ կռնակին վրայ դառնալով՝ երբոր կը պատրաստուէր երկու կտոր ընել Հնդիկն, զգացի որ Նէմոյ Նաւապետ, որ քովս կծկեալ էր, յանկարծ ոտքի վրայ ելաւ, եւ դաշոյն ի ձեռին ուղղակի ճիւաղին վրայ քալեց, հետն ոգորելու պատրաստ։ Դեռ զայն, այն վայրկենին՝ յորում պիտի յափշտակէր տարաբաղդ Հնդիկը, տեսաւ իւր նոր ոսոխն եւ նորէն փորին վրայ դառնալով արագապէս անոր վրայ դիմեց։

Դեռ աչքիս առջեւն է Նէմոյ Նաւապետին կեցուածքը։ Իւր վրայ ամփոփուած, սքանչելի պաղարիւնութեամբ սպասեց ամեհի գազանին, և երբոր իւր վրայ յարձակեցաւ, Նաւապետն հրաշալի ճարպկութեամբ մէկ կողմ նետուելով՝ խուսեց նորա բախումէն և դաշոյնը փորը խոթեց։

Բայց գործն այսչափով չաւարտեցաւ։ Զարհուրելի կռիւ մ'սկսաւ։

Շանաձուկը կատղեր էր։ Արիւնն ուղխօրէն կը հոսէր վէրքերէն։ Ծովը կարմրեցաւ, եւ այն պղտոր հեղուկին մէջէն բան չտեսայ այլ եւս։

Ոչինչ տեսայ մինչեւ այն վայրկեանն, յորում արեւուն ճառագայթը ջուրին մէջ թափանցելով, տեսայ յանդուգն Նաւապետն, որ գազանին լողաթեւերէն միոյն կառչած՝ կը կռուէր ճիւաղին հետ, եւ դաշոյնի հարուածներ կուտար նորա փորին, առանց սակայն վերջնական հարուածը տալու յաջողութեան, այսինքն սրտէն զարնելու։ Ճիւաղն, ոգորելով, կատաղաբար կը յուզէր ջուրերն, այնպէս որ նոցա պտոյտը զիս տապալել կ'սպառնար։

Կ'ուզէի յօգնութեան դիմել Նաւապետին, բայց սարսափէս գամուած, չէի կրնար շարժիլ։

Ահաբեկ աչօք տեսայ որ կռուոյն կերպարանքը կը փոխուէր։ Նաւապետն իւր վրայ ծանրացած անհեթեթ կոյտէն կործանեցաւ. յետոյ շանաձկան կզակը տարապայման բացուեցաւ դարբնոցներու շոգեշարժ մկրատի մը նման, եւ Նաւապետին գործը լմնցած էր, եթէ Նէտ Լանտ իւր եռասայր տէգն ի ձեռին, կայծակի արագութեամբ շանաձկան վրայ նետուելով՝ ուժգին հարուած մը չտար նմա։

Ջուրերն արեան գոյն առին եւ նորէն յուզեցան ճիւաղին օրհասական շարժումներէն, որ մոլեգնաբար կը ծեծէր զանոնք։ Նէտ Լանտ չէր վրիպած իւր նպատակէն։ Ճիւաղին վերջին հոգեվարքն էր։ Սրտէն զարնուելով՝ կը թալթլէր սոսկալի ջղաձգութեամբ, որոյ հակահարուածէն տապալեցաւ Քոնսէյլ։

Սակայն Նէտ Լանտ քաշեր հաներ էր Նաւապետը գազանին տակէն անվնաս։ Իսկ սա, ոտքի վրայ ելնելուն պէս, վազեց գնաց Հնդկին քով, զայն քարին կապող պարանը կտրեց, եւ գրկելով, կրունկի ուժեղ հարուածով մը ծովուն երեսն ելաւ։

(Շարունակելի)

քաշարին Քեսիաքոֆ փախաւ։ Մինչեւ Ռուսճուգ քանիցս ձերբակալեցաւ, եւ յետոյ վախկոտութեամբ ու ստորնութեամբ յանձն առաւ ամեն ինչ խոստովանիլ, եթէ իր կեանք խնայուի։ Բայց որովհետեւ իբրեւ ռուսահպատակ պաշտպանութիւն կը վայելէր, շուտով արձակեցաւ։ Հիմակ 'ի Ռուսիա կը կենայ։ Երկու օր եսք հազարապետ Նրուէֆ, հարիւրապետ Գենտերէֆ եւ այլ պուլկար սպայք որոց կաշառման միջնորդած էր, նմանապէս ծախուեցան։ Գենտերէֆ և Նրուէֆ, որք հիմա բանտ են, կեղծ անուամբ անցագրեր ստացած էին Վիտինի ռուս հիւպատոսէն։ Քեսիաքոֆ բախտախնդիր մ'է, որ ամենավայրագ ընթացք մ'ունեցաւ 1878 ի պատերազմին մէջ։ Նը բռնադատէր Թուրք գիւղերու խեղճ բնակիչներն՝ իրենց ձեռօք փորել իրենց գերեզմանները, և ապա պաղարեամբ կը զարնէր կը սպաննէր զանոնք։ Աւարառութեամբ և աւելի խայտառակ չարագործութեամբք ոզեւէ հարստ մը շինած էր։ Բայց յաջողակ էր կաշառելու տկարամիտ երիտասարդներ, որք չուայտութեամբք պարտուց տակ ինկած են բստ օրինակի ռուս սպայից, և որք չեն կրնար դիմադրել ձրի ըմպելեաց և ուտելեաց, ոսկեդրամներու և ռուսական բարձր պաշտամանց որոտոյթ խոստումներուն։ Անոնք որ այս ստորին միջոցներով չէին կրնար շահուիլ, զինուորական կցորդ ռուս գնդապետ Զախարոֆի ջանիւք կը հրաժանուէին ռուս քաղաքականութեան վրայ, և Նրուէֆ այսպիսեաց կարգէն էր։ Նրուէֆ խոստովանեցաւ թէ Զախարոֆ վեց ամիս շարունակ աշխատած էր համոզել զինք, մինչեւ որ ինք զիջաւ (1) պուլկար բանակին մէջ գնդապետութեան մը խոստումն առնլով, և (2) համոզուելով թէ, Իշխանին դէմ դաւադրելով, ծառայութիւն մը մատուցած պիտի լինէր թէ Իշխանին և թէ երկրին շահուց, բստ որում կարելի չէր պուլկարական միութեան գործն ամբողջացնել ցորչափ Իշխանը գահուն վրայ էր, որով Ն. Բարձրութիւն շատ չնչած բռնիշխական յեղափոխութեամբ մը բռնի պիտի տապալուէր։ Պատճառ կայ հաւատալու թէ Նրուէֆի այս համոզում ճշմարիտ էր. ուրիշներ ալ իրեն պէս դաւակցութեան յարեցան տեսնելով թէ անհնար էր պուլկարական միութիւնն 'ի գլուխ հանել ցորչափ Իշխանն ու Զայն անհաշտ կը մնային։ Բայց դաւին մասնակցող քաղաքացիք սակաւաթիւ էին։ Ի բաց առեալ զՊալապանոֆ, որ նախարարական պաշտօն վարած է, Զանքոֆի կուսակիցք անյայտ և դիւրաւ շահուող մարդիկ էին, այնպէս որ հարկ իսկ չէր կար կանխաւ իմացնել անոնց ոեւէ մը, որում ապահով էր թէ ետքէն պիտի ծափահարէին։ Անոնցմէ շատեր, երեսփոխան թէ Լրագրապետ, չեն ծածկեր թէ ընտրուած են կամ իրենց լրագիրը կը պահէին շնորհիւ ռուսական րուպլիներուն, և միակ զարմանքն այն է թէ Ռուսիա, այնչափ մեծ գումար մը վատնած լինելով, աւելի մեծ արդիւնքներ ձեռք չէ բերած ցարդ։ 80,000 անգլ. ոսկւոյ տարեկան տուգանքը, զոր Պուլկարիա կը վճարէ ի հատուցում 1878 ի ռուսական գրաւման բանակին ծախուց, Ռուսիա չէ զրկուած, այլ տարուէ տարի թողուած է Պուլկարիոյ և Րումելիոյ ռուս հիւպատոսաց տրամադրութեան ներքեւ, իբրեւ «գաղտնի փարք», և սակայն վերջին մայիսի Ընդհ. Ընտրութիւնն, յորմէ մօզրովեան հիւպատոսք մեծ բաներ կ'ակնկալէին, սակաւաթիւ հետեւողներ տուաւ Զանքոֆի։ Ի Փիլիպէ երիտասարդ արմատական կուսակցութիւնը կազմակերպեցաւ իբրեւ կռուող խումբակ, [illegible] անուամբ, ծեծելու և վանելու համար բոլոր Ռուսասէրներն, որք համարձակին ձայն բառնալ ժողովներու մէջ։ Ի վ'ուր Զանքոֆեանք «Անմիջական Միութիւնն» իրենց նշանաբան ըրին։ [illegible] գիտէին թէ Միութեան հակառակողն ի Կ. Պոլիս Ռուսիա էր միայն, ուստի չէին ուզեր խաբուիլ։ Ստրանսքի, Ստոյանովիչ և Րիզոֆ, պաշտպանք անցեալ տարւոյ յեղափոխութեան, միշտ Իշխանին կողմ բռնեցին։ Զախարի Ստոյանոֆ, զոր ոմանք կ'անուանեն պետ Պուլկար Ռնչակեանց, նմանապէս Իշխանին կողմն էր, և իւր «Նէզաւիսիմոստ» (Անկախութիւն) անուն ազդեցիկ լրագրով ամեն օր Րումելիցիներուն խորհուրդ կուտար «ռուսական ամեն խոստում նկատել իբրեւ սուտ, և ռուսական ամեն պաշտօնեայ՝ իբրեւ թշնամի։» Ռուսք ի սկզբան յուսացին Րումելիոյ մէջ հակիշխանական յեղափոխութիւն մը յարուցանել։ Երբ ի դերեւ ելան, Սոֆիայի զինուորական դաւակցութիւնը կազմեցին ծանուցեալ եղանակաւ։»

Ստամոքսի և աղեաց «միտէ վէ պաղըրսագ» հիւանդութեանց քաջահմուտ մասնագէտ Տօքթ. Ռ. ՌՕՓԷՆՍՕՆ որ մեծ խնամով մշակած է զայդ ճիւղ, և նորանոր մեթոտներ ի գործ կը դնէ ընդհուպ բուժելու զայս ախտեր, կը գտնուի, առաւօտեան պէս, ամեն օր ժամը 4էն մինչեւ 7, Եէնի–Ջամի, Կեդրոնական նամակատան դէմ Նիւ-Եօրք դեղարան թիւ 12։

Երեքշաբթի օրեր անկարողները ձրի կը դարմանուին որպէս յառաջագոյն։ 18 20

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ

Ամեն. Ս Պատրիարք Հայրն՝ ընկերակցութեամբ Երուսաղեմայ Պարտուց բարձման Յանձնաժողովոյ գանձապետ Վսեմ. Մաղաքեա Սեպուհ էֆէնտիի, շաբաթ օրը Ելմտական պաշտօնատունը գնաց և տեսակցեցաւ Ելմտական Վսեմ. Նախարարին հետ։

Այս տեսակցութիւն կը վերաբերէր Երուսաղեմայ Պարտուց բարձման վերաբերեալ ինչ ինչ խնդրոց որոց մասին պէտք եղած կարգադրութիւնն ընել խոստացաւ Ելմտական Վսեմ. Նախարարն։

Այս մասին ունինք գրել ի մօտոյ։

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Կեսարիոյ առաջնորդական Տեղապահէն կողմէ շաբաթ իրիկուն յԱզգ. Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէր թէ Գաւառական Ընդհ. Ժողովոյն որոշմամբ՝ վիճակին Առաջնորդ ընտրուեր է Պատրիարքական փոխանորդ Ռուսճուգեան Գեր. Գէորգ վարդապետ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ուրբաթ օրը, Ազգ. Ժողովոյ նիստէն յետոյ, Քաղաքական Ժողովն ևս ի նիստ գումարուելով ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ ատենապետութեամբ Վսեմ. Նուբեան էֆէնտիի, հետեւեալ խնդիրք զբաղեցաւ.

1. Խասգիւղի Նորակազմ առժամեայ Թաղ. Խորհրդոյ անդամք թէեւ հրաժարած էին սակայն Ս. Պատրիարք Հօր յորդորանաց վրայ յանձն առած լինելով շարունակել իրենց պաշտօնն, որոշուեցաւ քաջալերական գիր մ'ուղղել առ յիշեալ Թաղ. Խորհուրդն։

2. Ժողովը տեղեկանալով որ Խասգիւղի գերեզմանատան սրճարանին մէկ կողմը գամբարանաց աւընթեր թատերաբեմ մը շինուեր է, ուր ամեն տեսակ անբարոյական խաղեր կը ներկայացուին, եւ այդ նուիրական վայրը պղծութեամբ եւ ժողովրդեան գայթակղութեամբ կը լնուն՝ որոշեց անմիջապէս յանձնարարել Նորակազմ Թաղ. Խորհրդոյն որ քննութեամբ մը ստուգէ իրողութիւնը, սոյն թատերաբեմին որո՛ւ կողմէ եւ որո՛ւ հաւանութեամբ կառուցուիլն, եւ արդիւնքը տեղեկագրէ։

3. Վարչական վերջին տնօրինութեան մը համաձայն, Ծերի գիւղի եկեղեցւոյ գործոց մատակարարութիւնն յանձնուած էր Բերայի Թաղ. Խորհրդոյն։ Ժողովը տեսնելով որ բանի մը խառնափուշեր առնելիք, որք սովոր են միշտ Թաղը վրդովել, կը խլրտին այդ տնօրինութեանց գործադրութեան խափան լինելու համար, որոշեց յանձնարարել Բերայի Թաղ. Խորհրդոյն հսկել այդ անձանց արարքներուն վրայ եւ յարգել տալ Խառն ժողովոյ որոշմամբ տեղի ունեցած Թաղային միացումը։

4. Ժողովն ընթերցաւ Իւսկիւտարի Եէնի Մահալլէի Թաղ. Խորհրդոյ ընտրութեան տեղեկագիրն եւ օրինաւոր գտնելով զայն հաստատեց։

5.— Ս. Նախագահը Ժողովոյն հաւանութեան ենթարկեց ինչ ինչ խնդրոց վերաբերեալ տնօրինութիւններ, զորս Քաղ. Ժողովոյ Վսեմ. Ատենապետին հետ համաձայնութեամբ կատարած էր։ Ժողովն իւր հաւանութեամբ հաստատեց զայնս։

6—Ժողովն ընթերցաւ Շապին-Գարա-Հիսարի Առաջնորդին և Քաղ. Ժողովոյն մէկ գիրն, որով վերջին հրկիզութեան դէպքը կը ծանուցանէին։ Եւ բստ որում յատուկ Թագրիրով օգնութիւն խնդրուած և յանձնախումբ մը կազմուելով հանգանակութեան տումար մը յանձնուած էր, Ժողովն հարկ չը տեսաւ նոր տնօրինութեան։

7.—Ազգ. ապահովութեան արկեղ մը հաստատութեան խնդրոյն վրայ՝ Մէրէնճզօղլի և Կիւմիշեան էֆէնտիներն բստ յանձնարարութեան Ժողովոյն ծրագիր մը մատուցած էին։ Ժողովն իւր անդամներէն Սեթեան Միհրան էֆէնտիին յանձնեց զայն յուսումնասիրութիւն։

Ժողովն զբաղեցաւ ուրիշ կարգ մը յարաբերական, Թաղային և Ներքին խնդիրներով։

Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑ

Ռուսիոյ կրթական Նախարարութեան խորհրդական Պ. Կարապետ Եզեանց որ իբր մէկ ամիս առաջ Կ. Պոլսէն անցնելով Կարին գնացած էր Սանասարեան Վարժարանի վիճակին աչքէ անցունելու, ինչպէս կ'երեւի մեր այս աւուր Կարնոյ թղթակցութենէն, նախորդ շաբթու սկիզբը մայրաքաղաքս հասաւ և այսօր Օտեսայի ճամբով Պետրբուրգ կը վերադառնայ։

Պ. Եզեանց աստ գտնուած միջոցին տեսակցութիւններ ունեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ բազում ազգայնոց հետ։

ԷՋՄԻԱԾՆԱՑ ԳՈՐԾԵՐԸ

Թիֆլիզէն հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն մեզ.

Կաթողիկոսը տակաւին Բիւրականի ամառանոցումն է, ամեն ինչ յանձնելով Սինոդականներին, որք կուսակցութիւնն իրենց կանոն են շինել։ Բացարձակ հակառակում են ընդդէմ Թիֆլիսի առաջնորդ Սեդրաքեան Արիստակէս եպիսկոպոսին, նրան ոչնչացնելու ստիպման ծածկապար կոչ առք են տնում այս ինչ քահանան փոխելով եւ միւսը նրա տեղում նշանակելով. միկին պատժում են, մէկ քանի օրից յետոյ պարգեւատրում, Սեդրաքեանի համբաւը և առաջնորդական ազդեցութիւնը կոտրելու համար։

Սինօդն ծածկապար ներկայացրել է ի Պետերբուրգ, որ կայսրն հաստատէ Սեդրաքեանին Շուշիի առաջնորդ. իսկ այս տեղն Թիֆլիս ո՞վ պէտք է նշանակուի դեռ յայտնի չէ։ Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցին նշանակել է Կաթողիկոսն Սինօդի անդամ, պատրուակաւ որ Սինօդականք պատահեաւ չկրողանան խաբել զԿաթողիկոսն. բայց ծածկապար ասել է Կաթողիկոսին թէ «կամիմ պատրաստել զՍուքիասն որ ինձանից յետոյ կաթողիկոս ընտրուի.» եւ այս զրոյցն էլ կուսակալն կրկնել է ասա մէկի մօտ՝ թէ Սուքիասն է սիրով Ռուսաց։

Սուրենեանց Գէորգ եպիսկոպոսի տեղն գնացել է Երեւան տէր Կարապետ եպիսկոպոս Նորընծայն հակառակ կամաց ժողովրդեան։

Ախալցխոյ սաստիկ խռովութիւն կայ ժողովրդի մէջ. Երբ Սեդրաքեանն առաջ Ախալցխայ էր, հրամանաւ Կաթողիկոսի գնացել է որ հաշտեցնէ ժողովուրդն՝ որ խռովեալ է քահանայից հետ Խորէն վարդապետ Ստեփանեանի պատճառաւ. ընդհակառակն խռովութիւնն է և ևս սաստկացել։

Ժողովուրդն պահանջում է տեղւոյն քահանաներն եւ տարել են եկեղեցիների բանալիներն յանձնել Սեդրաքեանին ասելով թէ մեք այսուհետեւ այդ եկեղեցիներն չենք մտնելու, եթէ այդ քահանաներն էլ մտնեն մեր եկեղեցին։

Մի եւ նոյն օրերն Պետերբուրգից Կաթողիկոսն խնդրագիր է ստանում որ ասաքէ այն տեղ զԽորէն վարդապետն Ստեփանեանց վարժապետ լինել այն տեղ եղած աշակերտաց, քանզի Հայր Պատկանեանն բոլորովին կուրացել է ծերութեան պատճառաւ, եւ լինի Պետերբուրգի և Մոսկուայի եկեղեցիների քարոզիչ եւ գահերեց երկու եկեղեցեաց ժողովրդեան. Կաթողիկոսն էլ նշանակել է այն տեղ այս պայմանաւ որ նախ՝ Խորէն վարդապետն գնայ Ախալցխայ, հաշտեցնէ ժողովուրդն եւ ապա գնայ Պետերբուրգ. այժմ կ'սպասենք սորա նորա գալստեանն։

Թիֆլիսի «Մեղու» լրագրին առաջիկայ յունվարին չէ շարունակելու, քանի Սինօդականներն գնոյ Էջմիածնի խմբագիր լինել «Արարատ» Ամսաթերթին ի վարձ իւր աշխատութեանց վասն ընտրութեան կաթողիկոսին։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ՄԱՐՍԻԼԻԱ

Բարեկամ մը որ վերջերս Մարսիլիայէն անցած է, հետեւեալը կը հաղորդէ մեզ.

Մարսիլիոյ Հնագիտական Ցուցահանդիսին մէջ հայկական արձանագրութեան մը գտնուիլը լսելով, գացի խնդրել և պահապանին հարցուցի թէ ո՞ւր էր հայերէն արձանագրութիւնը. պահապանը պատասխանօք «այս» ըսելէ յետոյ, գնաց զոց դարանէ մը մեծ զգուշութեամբ բոլո բերաւ զայն։ Սեւ մարմարինէ 30 հարիւրորդամետր երկայնութեամբ և 20 հարիւրորդամետր լայնութեամբ քար մ'է, լաւ յղկուած պատուանդանով և խիստ մաքուր արձանագրութեամբ մը, որ էր հետեւեալն.

Ի թուին ՌՃԺԲ մայիսի ԻԳ ի քաղաքն յԱմստերդամ, արդեամբք Զաքարի որդւոյ Դաւթի Ճիւղայեցւոյ և ենթադրութեամբ Կարապետի բանի սպասաւորի կազմեցաւ վէմս Օլլանդիւս սուրբ Կարապետին։

Քարին արձանագրեալ երեսն ուրիշ բան մը չըլլալով, միւս կողմը չորս անկիւնները խաչեր կան. իսկ մէջ տեղն աւելի մեծ խաչ մը, որուն չորս անկիւններուն վրայ զատ զատ գրուած են ՅԱ., ՔՐ., ԱՄ. և ԱՐ.։

Պահապանին հարցուցի քարին ուրկէ եկած ըլլալը. չէր գիտեր. միայն աչքիս կրցայ հասկնալ թէ Մարսիլիոյ եկեղեցիներէն միոյն մէջ կը գտնուէր եղեր, ուրկէ Թանգարան փոխադրեր են։ Բստ իս կարծեաց, այս քարը ժամանակաւ Ամստերդամի հայերը շինել տալով Մարսիլիոյ հայկական եկեղեցւոյն նուիրած են, վասն զի ինչպէս գիտենք, Հայք ժամանակաւ Մարսիլիա եկեղեցի ունէին, որ հալածման ենթարկուելուն համար անհետացած էր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱՆՇԱՆՔ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ

Պետական Խորհրդոյ անդամ անուանեցաւ Իւլէմա Նէճիպ էֆէնտիի որդի Վաշիտ պէյ։

Առեւտրական երկրորդ դատարանի անդամ անուանեցաւ Առեւտրական ծովային դատարանի անդամ Ռամիզ Հագգը պէյ։

Մուսուլի նախորդ դատական քննիչ Հաֆըզ Րիւշտի էֆէնտի Պաղտատի պատժական վերաքննիչ ատենի նախագահ անուանեցաւ։

Պոլսոյ վերաքննիչ ատենի [illegible] անդամ անուանեցաւ նախնական դատարանի հարցաքննչութեան դիւանի քարտուղարներէն Արթին էֆէնտի՝ որ Իրաւագիտական վարժարանի ուսումնաւարտներէն է։ [illegible] մասնաւոր գովեստիք կը խօսի Արթին էֆէնտիի նկատմամբ եւ գոհունակութիւն կը յայտնէ այս անուանման համար։

Գարահիսարի Գայմագամ անուանեցաւ Գանիճէրեի Գայմագամ Նաֆըզ էֆէնտի։

Սամսոնի պատժական դատարանին ատենապետ անուանեցաւ Վանայ նախորդ ընդհ. դատախազ և Իրաւագիտական վարժարանի ուսումնաւարտ Հիլմի էֆէնտի։

Թնդանօթարանի փաստաբան Մանասա-զատէ Րեֆիգ պէյի յաջորդեց Սպարապետի Դրան փաստաբան Րեշիտ էֆէնտի։

Չորրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ մաքսային վերատեսչութեան Մուհաֆազա Միւտիրի Պիւրջան էֆէնտիի և նոյն վարչութեան Պոլսոյ ճիւղին ընդհ. քարտուղար Ազիզ էֆէնտիի։

Չորրորդ կարգի Մէճիտիէ Օսմանեան Պանքայի Սելանիկի ճիւղին քննիչ Պ. Օկիւսթի և պաշտօնակիցներէն Ճէմալէտտին պէյի։

Հինգերորդ կարգի Մէճիտիէ՝ կայսերական բժիշկ Տր. Միւհլիկի որդի և Գերմանիոյ Թնդանօթաձիգ զօրաց տեղակալ Պ. Նոտար Միւհլիկի։

Վեհ. Սուլթանն Իմթիազ պատուանշանի ոսկի չքադրամը շնորհեց առաջին Միւսահիպ Շէրէֆէտտին աղայի։

ԵԼՄՏԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆՔ

Ելմտական արտասովոր բարեկարգմանց յանձնաժողովը շաբաթ օրն ի նիստ գումարեցաւ նախագահութեամբ Բարձր. Մեծ-Եպարքոսին։ Սոյն գումարման ներկայ գտնուեցաւ նաեւ կայսերական Գանձուն Նախարար Վսեմ. Ցաքիր փաշա։ Յանձնաժողովն իւր այդ նստին մէջ զբաղեցաւ Տէրութեան հասոյթներն ու ծախքերը քննելով։

* * *

Տպագրական Տեսչութիւնն երէկի Թուրք լրագրաց միջոցաւ պաշտօնապէս կը հերքէ շաբաթ աւուր [illegible] հրատարակած այն երկու տեղեկութիւններ, թէ բստ առաջարկութեան Ելմտական բարեկարգմանց Յանձնաժողովոյ, կառավարական մէկ քանի պաշտօնատունք պիտի ջնջուին, ընդ որս նաեւ Հաշուակալութեան Դիւանն և թէ Տպագրական Դիւանն եւս ջնջելի դիւանատանց շարքին մէջ կը գտնուի։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Երէկ մայրաքաղաքս հասած հեռագիր մը կը ծանուցանէր թէ Պուլկարիոյ Խնամակալութեան բոլոր անդամք և կառավարական պաշտօնատարք Թրնովա մեկներ են ներկայ գտնուելու համար Մեծ Սոպրանիէին որ պիտի բացուի յառաջիկայ չորեքշաբթի, 15 հոկտեմբեր։

Այսու հանդերձ լաւատեղեակ ակմբոց մէջ կը կարծուի թէ, կ'ըսէ [illegible], Սոպրանիէի բացումը պիտի յետաձգուի ժամանակ մը։

Պուլկարիոյ Խնամակալութեան կողմէ յատուկ պաշտօնով մայրաքաղաքս եկած է Պ. Կաբեքօֆ որ երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց նախարարի խորհրդական Վսեմ. Տատեան էֆէնտիի հետ և ներկայ խնդրոց վրայ մանրամասն տեղեկութիւններ և բացատրութիւններ տուաւ։

Սոֆիայի կառավարութիւնը փափաքելով ժամ առաջ կարգադրել Պուլկարիոյ իշխանի ընտրութեան կարեւոր խնդիրն, որոշեր է պատգամաւորութիւն մը ղրկել Պերլինի Դաշնագիրն ստորագրող Տէրութեանց քով, պաշտօն տալով նմա բացատրել երկրին տագնապալի կացութիւնն և զգացունել թէ ստիպողական հարկ կայ իշխանին ընտրութիւնը փութացնելու։

Վսեմ. Ալէքօ էֆէնտի եւ իւր քարտուղարը՝ Շէքիպ պէյ ու Րաղըպ էֆէնտի շաբաթ իրիկուն Ադրիանուպոլսէն եկող կառախումբով մայրաքաղաքս հասան։

Բստ տեղեկութեանց [illegible], Սոֆիայի ռուսական հիւպատոսարանը [illegible] խումբ մը կը կազմակերպէ եղեր, որուն մասնակցիլ հրաւիրեր է պուլկարական երկաթուղեաց շինութեան աշխատող Մակեդոնիացի ու [illegible] բոլոր գործաւորները։

ՕՍՄ. ՆԱՒԱՏՈՐՄՆ

Վեհ. Սուլթանն ուզելով աւելցնել եւս զօրացնել օսմ. նաւատորմն, հրամայած է Ծովային նախարարութեան որ մէկ ու կէս միլիոն օսմ. ոսկւոյ զրահաւորներ եւ այլ եւ այլ մարտանաւեր գնուին։

ԱԳԼ. ԴԵՍՊԱՆՆ

Սըր Ուիլիըմ Հուայդ ուրբաթ իրիկուն Սելանիկ հասած լինելով, հաւանաբար շաբաթ առաւօտ մեկնած լինի Ֆրէսնիէի չոգենաւով որ Կ. Պոլիս կը հասնի յառաջիկայ չորեքշաբթի։

Կը կարծուի թէ անգլ. նորընտիր դեսպանը կարեւոր զեկուցումներ պիտի ընէ Բ. Դրան. Այդ զեկուցմանց եզրակացութիւնն է՝ Տէրութեանց հետ համաձայնութեամբ պէտք եղած խաղաղասիրական միջոցները ձեռք առնելով վերջ տալ քաղաքական արդի տագնապալի կացութեան։

Դեսպանատան պաշտպան [illegible] չոգենաւուն ազատման մեծ յոյս չկայ տակաւին, վասն զի մինչեւ ցարդ միեւնոյն վտանգաւոր դիրքի մէջ կը գտնուի այն Կէլիպոլուի բացերն, աւազակոյտին վրայ։ Շաբաթ առաւօտ մայրաքաղաքիս անգլ. հիւպատոսարանն հասած հեռագիր մը կը յայտնէր թէ գործիներու և չղթայի պէտք կայ [illegible] ազատելու փորձելու համար. հետեւաբար հիւպատոս Պ. Բէնչ, Լիման-Ցուսոփ երթալով խնդրեց պէտք եղած գործիներն, որք իւր տրամադրութեան ներքեւ դրուեցան և նոյն երեկոյին նաւաձիգ չոգենաւով մը ճամբայ հանուեցան դէպ ի արկածի վայրն։

Վերջին օրերս հրատարակեալ կայս. Իրատէ մը կը հրամայէ դադրեցունել պահեստի զօրաց առաքումն, որք, բստ նախորդ հրահանգաց, Ադր. Պոլսոյ, Մակեդոնիոյ եւ Կարնոյ զօրաբանակները պիտի ղրկուէին։ Պահեստի վաշտերն իրենց տեղերն համախմբուելով առայժմ զինուորական կրթութիւններ պիտի կատարեն։

Ուրբաթ աւուր Սէլամլըգի հանդէսին, որ սովորականէն աւելի շքով կատարուեցաւ ի Պէշիկթաշ, ներկայ էին ֆրանսական դեսպանն ու Տիկին Մոնդեպէլլօ, Պ. Լէօն Սէ, Պ. Ճօզէֆ Չէմպըրլէյն, ընտանեօք, եւ Պ. Ճէս Քոլինկս. Վեհ. Սուլթանը մզկիթէն ելնելէ առաջ, իւր Թիկնապահներէ Վէլի Րիզա փաշան պահականոց ղրկեց իւր բարեւներն հաղորդելու բարձրաստիճան այցելուաց եւ հրաւիրելու զանոնք որ Եըլտըզի դարաստանը շրջին։ Քիչ վերջը, պալատական երկու կառքեր դրուեցան անոնց տրամադրութեան ներքեւ եւ Մոնդեպէլլօ կոմսն ու միւս օտարազգիք շրջեցան դարաստանին այլ եւ այլ կողմերն, առաջնորդութեամբ երկու Թիկնապահաց։

Նոյն աւուր Սէլամլըգին ներկայ էին նաեւ Փարիզի օսմ. դեսպան Էսատ փաշա, Ուէնտսորի պալատան մատենադարանապետ Պ. Նաթալի, Քաֆարէլ գնդապետն, ամերիկեան գործակատար Պ. Ուիլիըմ Քինկ եւ այլ օտարազգիք։

Փարիզէն առնուած լրոյ նայելով, Ֆրանսա, Գերմանիա եւ Ռուսիա կարծեաց փոխանակութիւններ կը կատարեն այս պահուս ի մասին այն ձեռնարկներուն զորս պիտի ընեն Անգլիոյ Եգիպտոսէ ելնելու խնդրոյն համար։

Վեհ. Սուլթանին հրամանաւ, կայս. զօրաբանակաց գործածութեան յատկանալի երեք տեսակ նորահնար հրացաններէ մէկ մէկ հատ բերուած էին եւ Տէրվիշ փաշայի նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուած էր այդ հրացանները փորձելու և քննելու համար։ Այս յանձնաժողովն հեծելազօրաց ընկերակցութեամբ շաբաթ օրը Քեաղըթխանէ գնաց և պէտք եղած փորձերը կատարեց։ Գնդակները մինչեւ 2200 մեթր հեռաւորութեամբ դրուած կէտի մը զարկին։ Յանձնաժողովն այս փորձերէն յետոյ պէտք եղած ուրիշ քննութիւններն ևս պիտի կատարէ և արդիւնքը տեղեկագրով մը պիտի մատուցանէ Ն. Վեհափառութեան։

Կայս. կառավարութեան հաղորդուած տեղեկութիւնք կը յայտնեն թէ Պօսնիոյ մէջ եւս հնախտ ծագեր է և քանի մը մահեր պատահեր են ի Տօլնիա-Թիւզլա։ Այս լրոյն վրայ, առողջապահական խորհուրդն յարտասովոր նիստ գումարեցաւ շաբաթ օրը, պէտք եղած զգուշական միջոցները տնօրինելու համար։

Գերմանական դեսպանատան առաջին Թարգմանն երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին եւ Վսեմ. Տատեան էֆէնտիի հետ։

Գօնեայի համանուն լրագիրը կը ծանուցանէ թէ գաւառին տասանորդական տուրքն այս տարի 18,448,489 ղրուշի փոխարէն վարձակալութեան տրուեր է, որով անցեալ տարուան հասոյթէն 5,410,343 ղրշ. աւելի հասոյթ գոյացեր է։ Այդ տուրքն ուղղակի տասանորդական տրոց վարչութեան կողմէ գանձուած ժամանակ 40,000 ոսկի ծախք կը լինէր, իսկ այս տարի այս գումարն Ելմտական գանձուն մնալով Գօնեայի տասանորդի հասոյթը 90,000 ոսկի արտադրած է։

Ոստիկանութեան նախկին նախարար Հաֆըզ փաշայի մահը ցաւալի միջադէպի մ'առիթ տուած է։ Ցայտնի է թէ ծերունի փաշան՝ անբուժելի հիւանդութեան մը մատնուած՝ երբ վերջին միջոց փորձել ուզեց Տր. Տէժարտէնի ջրաբուժական բաղանիքին ուր 7րդ [illegible] ըրած միջոցին յանկարծամահ եղաւ։ Հաֆըզ փաշայի դուստրն ու երկու աղախինք՝ [illegible] ընող անձին վրայ յարձակելով կը զանակոծեն զայն. իսկ փաշային կինը րէվօլվէր մ'ի ձեռին, կ'սկսի հալածել խեղճ Տր. Տէժարտէնն որ մազապուր փախչելով իւր պանդոկէն հազիւ կը յաջողի ֆրանսական հիւպատոս Պ. Կադէյի տունն ապաստանիլ։ Անմիջապէս լուր կը ղրկուի Պ. Կադէյի, որ հիւպատոսարանի Թարգմանի մը, երկու Գաւասներու և Տր. Տրլաքուրի ընկերակցութեամբ կը փութայ Բերայէն Գատըգիւղ երթալ քննութիւն մը կատարելու համար, սակայն Հաֆըզ փաշայի մարմինը վերցուցած էին արդէն եւ թաղումը կը կատարուէր. հետեւաբար Պ. Կադէյ ի պաշտօնէ տեղեկագրեց այս իրողութիւնն որ անհնար կ'ընէր այլ եւս ո՛ր և է օրինական քննութիւն մահուան պատճառներուն և պարագայից վրայ։

Հաֆըզ փաշա վաթսունամեայ զօրավար մ'էր և բաց ի ոստիկանութեան նախարարի պաշտօնէն, վարած է նաեւ հրամանատարի պաշտօն մը Թուրքօ-ռուսական վերջին պատերազմին մէջ եւ 1876ին օսմ. պատուիրակ կարգուած է Պոսնիոյ և Պուլկարիոյ երկաթուղեաց միացման գծերու շինութեան նախնական քննութիւնները կատարելու համար։

Նաւային շինութեանց [illegible] ընկերութեան վարչութեան նախագահ Լիվօնիուս գեր-ծովակալն որ ժամանակէ մը հետէ մայրաքաղաքս կը գտնուէր, Ծովային Նախարարութեան կողմէ յանձնարարեալ ծովառմակրաց շինութեան պայմանաց վրայ բանակցելու համար, շաբաթ օրը Գերմանիա ուղեւորեցաւ։ Լիվօնիուս գեր-ծովակալը Կ. Պոլսոյ գերմանական դեսպանատան պահակ չոգենաւուն հրամանատարութիւնը վարած է չուրջ երեսուն տարի։

Եղեռնադատ ատենի Խորհրդակցութեան սենեկին մէջ նոյն դատարանի անդամ Արիֆ պէյի եւ վերաքննիչ ատենի ընդհ. դատախազի օգնականներէն Համտի էֆէնտիի միջեւ օրինաց վրայ վիճաբանութիւն մը կը ծագի որ ի վերջոյ կռուոյ մը կերպարանը կ'առնու։ Դատարանի նախագահ Վասըֆ էֆէնտի կը հրամայէ Համտի էֆէնտիի՝ անմիջապէս դուրս ելնել որուն կը հնազանդի այս վերջինն։ Արիֆ պէյ ցասումը չկրնալով զսպել, բողոքագիր մը պատրաստելով Վսեմ. Նախագահին կը ներկայացնէ ստորագրելու համար։ Վասըֆ էֆէնտի կը մերժէ օրինաւոր առարկութիւններ մէջ բերելով։ Արիֆ պէյ ասոր վրայ բոլորովին զայրանալով ուղղակի Դատական Նախարարութեան դիմելով բողոք կը բառնայ և խնդիրը վճռաբեկ ատենին կը յանձնուի ի քննութիւն։

Այս առաւօտ մայրաքաղաքս հասան Աթէնքի ռուսական դեսպան Պ. Պիւձօֆ, Եգիպտոսի ռուսական ընդհ. հիւպատոս Պ. Գոյանդէր և աւստրիական դեսպանատան զինուորական կցորդ Մանէկէս հրամանատարն։

Ներքին գործոց նախարարութիւնը շրջաբերական մ'ուղղելով բոլոր գաւառաց, ծանուցած է թէ օտար երկիրներ երթալու պատրաստուող կարօտ վիճակի տէր անձանց ուղեւորութիւնը պէտք է արգելուլ և անցագիր չտալ։ Օտար երկրաց օսմանեան հիւպատոսք աղքատներն պիտի վերադարձունեն իրենց հայրենիքը և նաւաբուռ ծախքը պիտի գանձուի նոցա ազգականներէն, և եթէ երաշխաւոր չունին անցագիրը տուող պաշտօնեայներէն։

Սելանիկի կող'երը դարձեալ աւազակաց խումբերը երեւան ելած են որք թէ և մտահոգութիւն կը պատճառեն, սակայն տեղական կառավարութիւնը պէտք եղած միջոցները ձեռք առած է և կեդրոնական իշխանութեան ևս կարեւոր հրամաններ ղրկած է ի Սելանիկ։

Անցեալ հինգշաբթի կէս օրէն վերջ երկրաշարժի ցնցում մը զգացուեր է ի Կարին, առանց վնաս մը պատճառելու։

